

Անդրաման Կոֆիք

Քործանութեան Յանձնչ
Հայոց



891.71
4-83

891.71

4-83

ԵԱՏՈՒ ԿՐԵՑՆ

25 SEP 2006

19 NOV 2010

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՍՀՄ ԳԱՅՈՒԹՅԱՆ ՏԸՆ

ԽՎ. 13 ՀՕՏ-19

792.1

ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ԾԱԿՆԵՐ

ՀԱԿԱԱԼԿՈԶՈՒԱԿԱՆ ԴՐԱՄԱ 1 ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ

ԹԱՐԴ. Մ. ՓԱՓԱՁԱՆ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴ. ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ 1931—IX ՈՒՍՏՈՎ

24.05.2013

АННАТОЛИЙ КРЕЙН

11842

ЗАВОДСКИЕ ГУДКИ

Антиалкогольная драма в 1 акте.

На армянском языке

Перев. М. Папазян.



Ч 3 817-63

Сев.-Кав. Кр. отд. ЦЕНТР. ИЗДАТ. народов СССР
„КРАЙНАЦИЗДАТ“

Уполномоченный № 3216 Ростов на Дону.
газ.-кн. тип. СККПО Ст.-ф. 66 176x125 Зак. № 3528. Тираж 1500

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՄԻՄՈՒ ՊԱՂՈՍՅԱՆ—նախկին բանվոր.

ՊԵՏՐՈՍ ՄԱՐՈՒՅՅԱՆ—գործարանի բանվոր.

ՆՎԱՐԴԻ—նրա կինը.

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԱՐՍԵՂՅԱՆ — բանվոր, գործարկոմի
անդամ.

ԶԱՐՈՒՀԻՄԻ—նրա կինը.

Գործողությունը կատարվում է գործարանի բանվորական
համակացարանում:

Ճ +

մում եր և հանկարծ մի անգամից թողեց: Եղ ինչ բախտավորություն ե քեզ համար:

ԶԱՐՈՒՀԻ. Ի՞նչ խոսք: Այժմ անշափ ուրախ եմ, յերբ տեսնում եմ Ալեքսանիս: Ուրիշ մարդ դարձավ... Յեկ միշտ ել մի բաժակից ե սկսվում: Յերկի չես մոռացել Սիմոն Պողոսյանին:

ՆՎԱՐԴԻ (բորբոքված). Հիշում եմ Սիմոնին, Զարուհի: Ի՞նչ կարիք կա թագցնելու:

ԶԱՐՈՒՀԻ. Ավասո, ինչ յերիտասարդ եր: Նայողի քեֆը կգար:

ՆՎԱՐԴԻ. Գործարանում առաջին յերիտասարդն եր: ԶԱՐՈՒՀԻ. Են ել վճնց եր աշխատում, տասի տեղ: Ամենալավերի շարքումն եր:

ՆՎԱՐԴԻ. Ե՞ս, փչացավ տղան:

ԶԱՐՈՒՀԻ. Հենց մի բաժակից ել սկսվեց: Խոկ հետո սկսվեց գործալքումը, հարբեցողությունը: Հիշում ես, Սիմոնը հարբած վիճակում վոնց կաթսան պայթեցրեց: Ամբողջ գործարանում ինչպիսի իրարանցում սկսվեց:

ՆՎԱՐԴԻ. Վճնց չեմ հիշում: Հենց այն կաթսայի համար ել նրան հետացըին գործարանից:

ԶԱՐՈՒՀԻ. Բա վճնց չենուացնելին: Դրա համար նրան դատի յենթարկելն ել քիչ ե: Յեկ զարմանալի յե, ինչպես նա աղատվեց: Մեքենավար Նալբանդյանը սպանվեց: Հնոցապան Գետրոսյանը մեռավ: Նրանց կանայք իրենց յերեխաներով անտեր մնացին: Խոկ ով եր մեղավորը: Արագն եր մեղավոր: Անիծված լինի նա... Ե՞ս, յես ել ինչու միշտ Սիմոնի մասին եմ խոսում քեզ հետ: Արի տես վոր գիշերով տրամադրությունդ կփչացնեմ: Տեսնում եմ, թե ինչպես տիրեցիր:

ՆՎԱՐԴԻ. Սիրում եյի յես Սիմոնին, Զարուհի: Այս-

Պետրոս Մարուքյանի սենյակը: Ուշ գիշեր եւ Թալիս և աշնանային անընդհատ անձրեւ նվարդը կարող զբաղված զրուցում ե Զարուհու հետ:

ԶԱՐՈՒՀԻ. Ի՞նչ եղանակ, Նվարդ միշտ մարդուդ մասին ես խոսում: Կղամ:

ՆՎԱՐԴԻ. Գիտեմ վոր կդա: Բայց շատ անհանգստանում եմ, Զարուհի: Հենց վոր Գետրոսը ոսճիկն ստանում ե, ընկերների հետ խմում ե:

ԶԱՐՈՒՀԻ. Ուրեմն քո Պետրոսը հարթեցողությամբ ե զբաղվում:

ՆՎԱՐԴԻ. Զե, Զարուհի, մեղքի տակ չեմ ուզում մոռնել: Գետրոսին յերբեք հարբած չեմ տեսել: Պետրոսն իր չափն՝ իմանում ե: Բայց միայն նա ավելի հաճախ և ավելի շատ սկսեց խմել: Յես նրան հարբած չեմ տեսել:

ԶԱՐՈՒՀԻ. Ահա այսպես ել սկսվում ե՝ սկզբում միշտ բաժակ, իսկ հետո կսկսի շատ խմել:

ՆՎԱՐԴԻ. Ի՞նչ ես ասում: ԶԱՐՈՒՀԻ. Բա ինչ ես կարծում: Դեռ լավ ե, վոր Աւագանս թողել ե, ել չի խմում, թե չե յես նրանից շատ եյի եյի նրա համար:

ՆՎԱՐԴԻ. Միթե ընկեր Բարսեղյանը չի խմում:

ԶԱՐՈՒՀԻ. Հապա ի՞նչ եյի կարծում: Ուրախությանս չափ չկա, յերբ այժմ նրա վրա յեմ նայում:

ՆՎԱՐԴԻ. Եղ ինչ հրաշք ե: Նա ամբողջ կյանքում խը-

մում եր և հանկարծ մի անդամից թողեց։ Եղ ինչ բախտավորություն ե քեզ համար։

ԶԱՐՈՒՀԻՆ. Ի՞նչ եղանակ, նվարդ միշտ մարդուդ մասին ես խոսում։ Կդա։

ՆՎԱՐԴԻ. Գիտեմ վոր կդա։ Բայց շատ անհանգստանում եմ, Զարուհի։ Հենց վոր Պետրոսը ոռնիկն ստանում ե, ընկերների հետ խմում ե։

ԶԱՐՈՒՀԻ. Ուրեմն քո Պետրոսը հարբեցողությամբ ե պաղվում։

ՆՎԱՐԴԻ. Զե, Զարուհի, մեղքի տակ չեմ ուզում մանել։ Պետրոսին յերբեք հարբած չեմ տեսել։ Պետրոսն իր չափն իմանում ե։ Բայց միայն նա ավելի հաճախ և ավելի շատ սկսեց խմել Յես նրան հարբած չեմ տեսել։

ԶԱՐՈՒՀԻ. Անա այսպես ել սկսվում ե՝ սկզբում մի-մի բաժակ, իսկ հետո կմսի շատ խմել։

ՆՎԱՐԴԻ. Ի՞նչ ես ասում։

ԶԱՐՈՒՀԻ. Բա ի՞նչ ես կարծում։ Դեռ լավ ե, վոր Աւելքսանս թողել ե, ել չի խմում, թե չե յես նրանից շատ եյք վախենում։ Ինչպես այժմ դու, այնպես ել յես սարսափում եյք նրա համար։

ՆՎԱՐԴԻ. Միթե ընկեր Բարսեղյանը չի խմում։

ԶԱՐՈՒՀԻ. Հապա ի՞նչ եյիր կարծում։ Ուրախությանս չափ չկա, յերբ այժմ նրա վրա յեմ նայում։

ՆՎԱՐԴԻ. Եղ ինչ նրաշք ե, նա ամբողջ կյանքում խը-

ՆՎԱՐԴԻ (բորբոքած)։ Հիշում եմ Սիմոնին, Զարուհի։ Ի՞նչ կարիք կա թագցնելու։

ԶԱՐՈՒՀԻ. Ափսոս, ի՞նչ յերիտասարդ եր։ Նայողի քեփը կդար։

ՆՎԱՐԴԻ. Գործարանում առաջին յերիտասարդն եր։

ԶԱՐՈՒՀԻ. Են ել վ՞նց եր աշխատում, տասի տեղ։ Ամենալավերի շարքումն եր։

ՆՎԱՐԴԻ. Ե՞ն, վչացավ տղան։

ԶԱՐՈՒՀԻ. Հենց մի բաժակից ել սկսվեց։ Իսկ հետո սկսվեց գործալքումը, հարբեցողությունը։ Հիշում ես, Սիմոնը հարբած վիճակում վոնց կաթսան պայթեցրեց։ Ամբողջ գործարանում ինչպիսի իրարանցում սկսվեց։

ՆՎԱՐԴԻ. Վ՞նց չեմ հիշում։ Հենց այն կաթսայի համար ել նրան հետացըրին գործարանից։

ԶԱՐՈՒՀԻ. Բա վ՞նց չենուացնեյին։ Դրա համար նրան դատի յենթարկելն ել քիչ ե։ Յեվ զարմանալի յե, ինչպես նա ազատվեց։ Մեքենավար Նալբանդյանը սպանվեց։ Հնոցապան Պետրոսյանը մեռավ։ Նրանց կանայք իրենց յերեխաներով անտեր մնացին։ Իսկ ով եր մեղավոր։ Արագն եր մեղավոր։ Անիծված լինի նա... Ե՞ն, յես ել ինչո՞ւ միշտ Սիմոնի մասին եմ խոսում քեզ հետ։ Արի տես վոր զիշերով տրամադրությունդ կփչացնեմ։ Տեսնում եմ, թե ինչպես ախրեցիր։

ՆՎԱՐԴԻ. Սիրում եյի յես Սիմոնին, Զարուհի։ Ա՛խ,

Ինչպես ջերմ սիրում եյի: Դու դիտես... Նա եր իմ առաջին սերը, իսկ առաջինը մինչև մահ չես մոռանա: Յես նրան, Սիմոնին, գրեթե կես տարի սպասեցի: Խոստանում եր ԶԱԿՍ-ում արձանագրվել: Այս, վանց եյի սպասում: Վորքան արտասուք թափեցի: Բայց ինչ արած, բախտու այդ եր: Ահա շուտով տարին լրանում ե, իսկ Սիմոնի մասին վոչ մի տեղեկություն չկա: Փչացավ տղան:

ԶԱՐՈՒՀԻ. Խսկապես, վոր փչացավ: Ո՞վ գիտե, վոր պատի տակ մեռած կինի:

ՆՎԱՐԴԻ. Ո՛, ինչ դառն ե իմ բախտը:

ԶԱՐՈՒՀԻ. Միթե Պետրոսի հետ վաս ես ապրում:

ՆՎԱՐԴԻ (օփարված). Ի՞նչ ես ասում, Պետրոսը վատ մարդ չե: Սիրում ե: Ուրիշը լիներ նրա տեղը, Սիմոնի պատճառով միշտ ինձ կհանդիմաներ, իսկ Պետրոսը լոռում է, կարծես թե վոչինչ չի յեղել: Սիմոնն ու Պետրոսը մըտերիմ ընկերներ եյին:

ԶԱՐՈՒՀԻ. Ի՞նչ ընկերներ: Յերբ միասին նստած տրաղ են խմում, ընկերներ են, իսկ գրանից գուրս իրարու վրա թքել անգամ չեն ուղում: Այդպիսի ընկերությունը զրոյ չարժե:

ՆՎԱՐԴԻ. Ի՞նչեր ես ասում, Զարուհի, Սիմոնը Պետրոսի պատիվը միշտ պահում եր:

ԶԱՐՈՒՀԻ. Դեռ լավ. յես վոչինչ չգիտեմ. իմ ինչ գործըն ե: Ուշ ե, իսկ յես յերկար նստեցի: Կարելի յե մարդու ժողովից արդեն յեկած լինի: Ժամանակ ե դնալու: Գիշեր

ՆՎԱՐԴԻ. Խսկապես վոր ուշ ե: Դրսում ինչ խավար ե, վոչինչ չի տեսնվում: Անձը կը գալիս ե, հա դալիս, քամին ել կատաղել ե: Իսկ Պետրոսն այս կես գիշերին վորտեղ ե ման դալիս: Այս, ինչ տիստը ե Զարուհի:

ԶԱՐՈՒՀԻ. Դե լավ, ինչ կա վոր: Կոտ քո Պետրոսը: Ո՞ւր պիտ գնա: Դեհ, մնաս բարով:

ՆՎԱՐԴԻ. Գնաս բարով, Զարուհի: (Զարուհին գնում ե: Նվարդն զբաղվում ե կարով յեվ կիսաձայն յերգում ե մի տրխուր յերգ: Քամու ու անձեռնի ձայնը փեղկերի նետեղում ու մեղանում ե: Հանկարծ դուռը պինդ յեվ անհանգիս բարխում են:)

ՆՎԱՐԴԻ (ուրախացած). Պետրոսն ե: Վերջապես: (Նսալ բացում ե դուռը: Հանկարծ վախեցած կանչում ե յեվ սարսափած հետ ե նահանջում: Կարծես թե վախչելով նեղապեղովներից, արագ ներս ե մենամ կեղսոս, պատառումած ուրերգով մի մարդ: Նու ամբողջ մարմնով դորում ե: Դա Սիմոն Պողոսանն ե: Սարսափած ու ըստպ փակում ե դուռը յեվ գոցում բանալիով):

ՆՎԱՐԴԻ (սարսափած). Ախ, մայր իմ... ինչ ե սա... Սիմոն... Սիմոն...

ՊՈՂՈՍՅԱՆ (Հնկատելով նվարդին, անի մեջ) Նրանք են... Նրանք են...

ՆՎԱՐԴԻ. Ի՞նչ ե այս... Սիմոն, Սիմոն... սիրելիս ախ, ինչպես դու վախեցրիր ինձ:

ՊՈՂՈՍՅԱՆ (Հնկելով) Նրանք են, Նրանք են:

ՆՎԱՐԴԻ (սարսափած). Սիմոն... Ո՞վ են նրանք:

ՊՈՂՈՍՅԱՆ. Նրանք են... Նալբանդյանը, Պետրոս յանը:

ՆՎԱՐԴԻ. Ի՞նչ ե նշանակում այս: Սիմոն, սիրելիս... Մեռել են նրանք, Նալբանդյանն ու Պետրոսյանը:

ՊՈՂՈՍՅԱՆ. Մեռել են: Սուս ե:

ՆՎԱՐԴԻ. Ախ ինչ գժբախտություն ե: Խելագարվել ես դու, Սիմոն: Նալբանդյանն ու Պետրոսյանը պայթումի ժամանակ սպանվեցին: Դու կաթսան պայթեցրիր: Զես հիշում:

ՊՈՂՈՍՅԱՆ (Հսելով). Յես դարպասի մոտ տեսա նալ-
բանդյանին, Պետրոսյանն ել նրա հետն եր:

ՆՎԱՐԴԻ. Ախ, ի՞նչ դժբախտություն ե, ախ, մայր իմ:

ՊՈՂՈՍՅԱՆ, «Վաղուց և քեզ սպասում ենք, ընկեր
Պողոսյան»—ասում են Նալլանդյանն ու Պետրոսյանը—«բա-
րով յեկար մեր գործարանը... Այստեղ քո վերջն ե լինելու,
ընկեր Պողոսյան»:

ՆՎԱՐԴԻ. Ի՞նչ ե նշանակում այս բոլորը: Սիմոն, սի-
րելիս:

ՊՈՂՈՍՅԱՆ (Հսելով) «Կիսեղենք Պողոսյանին»—ա-
սում ե Պետրոսյանը: «Վոչ»—ասում ե Նալլանդյանը—քցենք
նրան կաթսայի մեջ, ուղղակի հնոցը»:

ՆՎԱՐԴԻ. Սիմոն, ի՞նչ ե պատահել քեզ: Սիմոն, սիրե-
լիս, միթե չես ճանաչում ինձ: Նվարդն եմ, Նվարդը:

ՊՈՂՈՍՅԱՆ (նայում ե ավելի գիտակցաբար, կարծես թե
ինչ վոր մի բան իմեւնով: Հանկարծ ցնցլում ե) Նվարդ:

ՆՎԱՐԴԻ. Ի հարկե Նվարդն եմ, ել ով կարող ե լինել:

ՊՈՂՈՍՅԱՆ (հանկարծ կտրուկ). Պետրոսը գործեղ ե:
Մարուքյանը:

ՆՎԱՐԴԻ (ցնցվելով). Կդա Պետրոսը: Յես ինքս ել ըս-
տառում եմ Պետրոսին:

ՊՈՂՈՍՅԱՆ. Պետրոսը մոռերիմ բարեկամու ե... Մատերիմ
բարեկամու ե Պետրոսը:

ՆՎԱՐԴԻ. Ի հարկե, բարեկամ ե...

ՊՈՂՈՍՅԱՆ. Պետրոսի մոտ եմ յեկել:

ՆՎԱՐԴԻ. Ախ, ի՞նչ սարսափելի յես դու, Սիմոն: Ախ,
ի՞նչ դժբախտություն: Լավ կիներ վերաբերութ հանեցիր, բո-
լորովին թրջվել ե:

ՊՈՂՈՍՅԱՆ (բացում ե վերարկուն. յերեկում ե մերկ
կուրծքը). Հասկանալի՞ յե: Նոր ծնվածի շուրերով...

ՆՎԱՐԴԻ. Ախ, ի՞նչ դժբախտություն (դուռը բաղխում
են: Պողոսյանը ցնցլում ե):

ՊՈՂՈՍՅԱՆ (ամբողջ մարմնով ցնցվելով) Նրանք են:
Նրանք են: Անձնատուր չեմ լինի: Դուռը, դուռը բռնիր:

ՆՎԱՐԴԻ. Եդ ի՞նչ ե, Սիմոն, սիրելիս: Դա Պետրոսն ե,
Պետրոսը:

ՊՈՂՈՍՅԱՆ (մի քիչ հանգստացած, կասկածու): Պետ-
րոսն ե... Թող յես ինքսու.. (հեռացնելով նվարդին, վախով
բացում է դուռը, ինքը մի կազմեն է ցատկում: Մտնում է Պետ-
րոս Մարուքյանը: Նա քիչ հարբած ե: Դռան մեջ Պողոսյանին
տեսնելով, վախեցած յես է ցատկում):

ՄԱՐՈՒՔՅԱՆ. Թյուր, սատանան տանիւ: Ի՞նչ ե սա:
Պողոսյանն ե:

ՆՎԱՐԴԻ. Ի՞նքը Պողոսյանն ե, վոր կա:

ՄԱՐՈՒՔՅԱՆ. Պողոսյանը: Ի՞նչ բան ե սա, խակապես
վոր Պողոսյանն ե և ուրիշ վոչինչ: Հրամանքդ. վմբառեղից
յեկար, թանկագին ընկեր: (Հանում ե զլատարկը, վերարկուն
յել կախում ե: Պողոսյանը դեռ վախից մարսափած լուռ
նայում է երան):

ՆՎԱՐԴԻ. Ի՞նչու յես լոռում, Սիմոն: Տեսնում ես Պետ-
րոսն ե: Նստիր, Սիմոն, ի՞նչու յես կանգնած: (Պողոսյանը
սառն յեվ անտարեց նայում է արսովի վրա: Նվարդը ցույց է
տախի Մարուքյանին Պողոսյանին)—Նա ի՞նչ վոր լավ չի ըգ-
դում իրան: Կարծես խելքը թացրել ե:

ՄԱՐՈՒՔՅԱՆ (նվարդին) Վաչ մի խոսք: (Պողոսյանին)
վմբառեղից յեկար, թանկագին ընկեր: Դու ի՞նչպիս այս ո-
րին ընկար: Դէն, բացատրիր, ելի, սատանան ինձ տանիւ:

ՆՎԱՐԴԻ (Մարուքյանին). Դեմ լավ, մեղմ վարվիր նրա
հետ: Զե՞ վոր տեսնում ես մարդն ի՞նքն իրան կորցրել ե:

ՄԱՐՈՒՔՅԱՆ (նվարդին) Վաչ մի խոսք:

ՆՎԱՐԴԻ. Հարբած ես դու, Պետրոս: Ախ, հարբած ես,
քոռանամ յես:

ՄԱՐՈՒՔՅԱՆ (զննելով Պողոսյանին). Խակապես վոր
լավի ես, լավը: Զգեստներու վորտեղից ես ճանկել թանկա-
դին ընկեր, վոր ճակատներում ես կռվել, սիրելի ընկեր
(հեռանում ե):

ՆՎԱՐԴԻ. Վայ քոռանամ յես:

ՄԱՐՈՒՔՅԱՆ. Դեհ, պատասխանի՞ր, սատանան տանի:
ՊՈՂՈՍՅԱՆ. Ուր վոր եյի:

ՄԱՐՈՒՔՅԱՆ. Բայց վորտեղ եյիր, թանկագին
ընկեր:

ՊՈՂՈՍՅԱՆ Ուղղիչ տունը գիտես:

ՆՎԱՐԴԻ. Միթե դու ուղղիչ տանն ես նստել Սիմոն:
ՄԱՐՈՒՔՅԱՆ. Ահա թե ի՞նչ: Սկսեցիր գողուժյուն
անել սիրելի ընկեր:

ՊՈՂՈՍՅԱՆ (անտրքեր). ողու համար կարելի յէ և ըս-
պանել: (Մարուքյանը վախով նեռանում է Երանից):

ՆՎԱՐԴԻ. Սիմոն: Ի՞նչ որի հասար: Ի՞նչ յերիտասարդ
եյիր... Ախ...

ՄԱՐՈՒՔՅԱՆ (Նվարդին). Ավել-պակաս մի խոսի: (Պո-
ղոսյանին)—Ուրեմն մի ամբողջ տարի նստեցիր, թանկագին
ընկեր:

ՊՈՂՈՍՅԱՆ. Մի ամիս: Այսոր վերջին որն ե:

ՄԱՐՈՒՔՅԱՆ. Նշանակում ե ուղղիչ տնից անմիջա-
պես իմ մոտ յեկար, թանկագին ընկեր:

ՊՈՂՈՍՅԱՆ. Անմիջապես:

ՄԱՐՈՒՔՅԱՆ. Այդպես: (կոպիս ձեվով) Ի՞նչ ես կա-
մենում:

ՆՎԱՐԴԻ. Դե լավ, Պետրոս, դու ավելի մեղմ...

ՄԱՐՈՒՔՅԱՆ (Նվարդին). Զենդ կտրի:

ՆՎԱՐԴԻ. Աչքերս կուրանային:

ՄԱՐՈՒՔՅԱՆ (Պողոսյանին). Ի՞նչ ես կամենում: Խո-
սիր, սատանան տանի. խոսիր: Ուշ ե, ոկտոմ եմ քնել:
Քիչ ել ուշ գայիր ելի:

ՊՈՂՈՍՅԱՆ. Պետրոս, դու ընկեր ես:

ՄԱՐՈՒՔՅԱՆ (կտրով) Ի՞նչ:

ՆՎԱՐԴԻ (Պողոսյանին). Ի ճարկե Պետրոսը քո ըն-
կերն ե:

ՄԱՐՈՒՔՅԱՆ (Նվարդին). Զենդ կտրի:

ՊՈՂՈՍՅԱՆ (բանալով կուրծքը). Ահա. բոլորովին արկ-
լոր եմ:

ՄԱՐՈՒՔՅԱՆ (հոհուում ե). Տեսնում եմ, տեսնում եմ,
թանկագին ընկեր: Առանց մի խոսքի, ճենց ենպես վոր:
կա—բոլորովին տկլոր: (հոհուում ե):

ՊՈՂՈՍՅԱՆ. Ոգնիր:

ՄԱՐՈՒՔՅԱՆ (կարճ). Ի՞նչ:

ՊՈՂՈՍՅԱՆ. Ոգնիր, ներսս վառվում ե: Սատկում եմ:

ՄԱՐՈՒՔՅԱՆ. Ահա թե ինչ. միայն թե, թանկագին
ընկեր, յես քեզ վոչնչով չեմ կարող ոգնել:

ՆՎԱՐԴԻ. Ի՞նչ ե յեղել քեզ, Պետրոս, ի՞նչ ե նշանա-
կում այս բոլորը:

ՄԱՐՈՒՔՅԱՆ (Հանելով). Փող, յես ի ճարկե քեզ չեմ
տա, միենույն ե արազի կտաս: Իսկ գիշերելու համար ինձ
մոտ, թանկագին ընկեր, տեղ չկա, տեսնում ես, կարծեմ,
վոր մենակ չեմ ապրում. Նվարդը...

ՊՈՂՈՍՅԱՆ (կտրով ու բար զարմանելով). Նվարդն
ի՞նչ գործ ունի այստեղ:

ՄԱՐՈՒՔՅԱՆ. Ի՞նչպես թե ինչ գործ ունի, թանկա-
գին ընկեր: Նվարդն ի՞նչ գործ ունի: Զե՞ վոր Նվարդը կի-
նըս ե: Կինս ե, ուրիշ վոչինչ:

ՊՈՂՈՍՅԱՆ (բրացած, անտարքեր), **ԿԻՆԴ** (Նվարդը շուռ և գայլս, կամացուկ սրբում և արտասում):

ՄԱՐՈՒՔՅԱՆ (բարկացած). Կինս և, սատանան տանի: Կինս և, ուրիշ վոչինչ: Ահա թե ինչ, թանկագին ընկեր, կինս և և վոչ մի խոսք:

ՆՎԱՐԴԻ (անախործարյամբ). Բան դտավ պարծենալու:

ՄԱՐՈՒՔՅԱՆ (չլսելով). Յես քեզ, թանդագին ընկեր, ահա թե ինչ եմ սոսում—գնա այստեղից, քանի վոր դեռ վոչ վոք չի տեսել: Մի խայտառակիր ինձ: Ինձ չի սազի ընկերակցել հարբեցողի և գողի հետ:

ՆՎԱՐԴԻ. Եղ ինչ և, Պետրոս. բոլորովին դու խելաւ դարբել ես: Նա իրան կորցրել ե, իսկ դու փողոցն ես ցույց տալիս: Ինչ անտանելի յեղանակ ե դրսում, շանը նույն իսկ մարդ չի վոնդի: Պետրոս, չհ վեր նա քո մըտերիմ ընկերն ե:

ՄԱՐՈՒՔՅԱՆ (մի կողմ, օվացնելով). Գտավ մտերիմ ընկեր, սատանան տանի: (Պողոսյանին) Իսկ նախ քան ճանապարհ ընկնելդ յես քեզ կհյուրասիրեմ (դնում ե դեպի կախած վերարկուն, վարի գրանից հանում ե ողու չբացած շիքը). Ահա, թանկագին ընկեր: Առանց մի խոսքի:

ՆՎԱՐԴԻ. Սա ինչ բան և վերջապես: Հարբած ե յեկել և դեռ հետն ել ողի բներել:

ՄԱՐՈՒՔՅԱՆ (դնում ե ողին սեղանի վրա. (Նվարդին) վոչ մի խոսք: Բաժակ տուր, շուտ, սատանան տանի:

ՆՎԱՐԴԻ (նեղանալով գավարը դնում ե սեղանի վրա). աշքերս քուանային:

ՄԱՐՈՒՔՅԱՆ. Եղ ինչու համար մի բաժակ ես տալիս (ցույց տալով Պողոսյանին): Զես տեսնում ինչ յերեկելի հյուր ե յեկել: Ուղղիչ անից: Այս առթիվ յես ել պետք ե խմեմ, սատանան տանի: Դեմ տուր մի բաժակ ել և ուտելու բան բեր: Ել վոչ մի խոսք:

ՆՎԱՐԴԻ (ցույց տալով Պողոսյանին). Նա ինքն իրան կորցրել ե, իսկ դու ծազրում ես: Հարբած ես յեկել և դեռ պիտի խմեն (արտնեղած դնում ե սեղանի վրա յերկրորդ բաժակը յեվ ուտելի): Հորս ցավը խմեն, արաքվես դու:

ՄԱՐՈՒՔՅԱՆ. Զենդ կորի: Յես իմ չափս գիտեմ: Ճիշտ ե, թեև ընկերներիս հետ չափից մի քիչ ավելի յեմ խմել, սակայն այդ ցուրտ յեղանակի պատճառով երբ: Հենց բանն ել այդ անիբավ յեղանակի մեջն ե: Յես իմ չափս գիտեմ: Իսկ հիմա յել խմում եմ թանկագին հյուր ունենալու առթիվ:

ՆՎԱՐԴԻ. Յերանի տրաքվեյիր:

ՄԱՐՈՒՔՅԱՆ (ցույց տալով Պողոսյանին). Պարտավոր եմ հյուրասիրելու ընկերոջս, թե վոչ: Նա իմ բարեկամն ե, թե վոչ: Ահա թե ինչ, սատանան տանի: Շատ նուրբ բան ե: Այդ բանը պետք ե հասկանալ: (Նվարդը նրան պատասխան շտափ, հանկարծակի յերեսը դարձնում ե նրանից: Մարույանը սեղանի վրայից առնում ե սղու շիքը յեվ շուտ և տալիս ձեռինում Պողոսյանի առաջ): Վանց: Տեսաբը, թանկագին ընկեր: Ողին իսկական ողի յե, քառասուն աստիճանի... (Պողոսյանը վայրենի ազանուրյամբ նայում ե ողու շիքին):

ՊՈՂՈՍՅԱՆ (գողզողուն ձեռինը յերկարացնելով դեպի ողին ու խուլան ձայնով). Տնտը:

ՆՎԱՐԴԻ (մի կողմ). Ախ, քուանամ յես: Ես ինչ դժբաղդություն ե:

ՄԱՐՈՒՔՅԱՆ. Տես, թե վոնց սկսեցիր դողաւ, թանկագին ընկեր: Կարծեմ սենյակում տանք ե: Դին ինչու յես դողում (դուրս ե փոցնում ոչի խցանը: Լցնում ե արալը բաժակների մեջ: Պողոսյանն ազանուրյամբ խլում ե բաժակը, իսկ Մարույանը կոպտաբար կանգնեցնում ե նրան): Սպա-

սիր: Դեռ ժամանակ կա: Շատ ևս շտապում. թանկագին ընկեր (առնում ե ողիյով լի բաժակը յեվ ցույց ե տալիս Պողոսյանին) Տեսնում ես փոքր բաժակը, փոքր բաժակը; թանկագին ընկեր: Դու նրան լավ նայեր, թանկագին ընկեր: Խորասուզվիր նրա միջ: Հասկացիր: Քեզ հյուրասիրում ե Պետրոս Մարուքյանը, այլ վոչ թե վորե ե մեկը, թեեւ գու գող ես, զբանահատ ես, բայց վոչինչ, եկի Պետրոս Մարուքյանը քեզ հյուրասիրում ե: Ահա թե ինչպիսի բան, թանկագին ընկեր: Դու հասկացիր, գնահատիր (գրուգույնի օրու ե բերում բաժակը Պողոսյանի նենց քրի տակ). գնահատիր, սատանան տանի:

ՆՎԱՐԴԻ (Վրովիվելով). Եղ ինչ ե վերջապես, ինչու մարդուն ծաղրում ես: Ախ գու...

ՄԱՐՈՒՔՅԱՆ. Ընկերոջս պիտի հարգե՞մ, թե վոչ: Նա իմ բարեկամն ե, թե վոչ:

ՆՎԱՐԴԻ (սպառնալով). Դեհ լավ, սպասիր...

ՄԱՐՈՒՔՅԱՆ (Պողոսյանին). Դեհ այժմ խմիր, սատանան տանի. առանց մի խոռքի: (Պողոսյանը վայրենի ափահությամբ խորած ե ողիյով լի բաժակը յեվ վարկենաբար դաշտակում ե նրանի):

ՊՈՂՈՍՅԱՆ. Ելի:

ՄԱՐՈՒՔՅԱՆ. Այ թե վոնց ես շտապում, հա: Խմում ե առանց ուտելու, սատանան տանի: Թող յես ել կոնճեմ, թանկագին ընկեր (Պողոսյանի բաժակը լցնում ե): Խմիր և կորչիր այստեղից, թանկագին ընկեր, վոր կողմն վոր ուշ գում ես գնա: Առանց մի խոռքի: (Յերկուսն ել խմում են: Պողոսյանը բաժակն ուժգին խփում ե սեղանին: Բաժակը շարդկում ե):

ՆՎԱՐԴԻ. Ախ, մայր իմ, այս ինչ ե վերջապես:

ՊՈՂՈՍՅԱՆ (Մարուքյանին). Սրիկա, գարշելի:

ՄԱՐՈՒՔՅԱՆ (ավելի յեվս հարբած, կարճ). Ի՞նչ:

ՊՈՂՈՍՅԱՆ. Ո՞վ եր հարբեցնում:

ՄԱՐՈՒՔՅԱՆ. Ախ, գու անպիտան, սրիկա: Յես քեզ հյուրասիրում եմ, իսկ գու այդպես...

ՊՈՂՈՍՅԱՆ (մոտենալով դեպի Մարուքյանը). Ո՞վ եր հարբեցնում: Ո՞վ:

ՄԱՐՈՒՔՅԱՆ. Յես վհրաելից գիտեմ, թե ով եր քեզ հարբեցնում, գու վողորմելի հարբեցող:

ՆՎԱՐԴԻ. Թող, Պետրոս: Ասում եմ քեզ թող:

ՊՈՂՈՍՅԱՆ. Դնւ եյիր հարբեցնում,... Դնւ... Գործարանում յեղած ժամանակ բոլորովին չեյի խմում: Խմիր, Սիմոն: Ինչպես ընկեր, խմիր: Ընկերական շրջանում խմիր: Աշխատանքի գնալու խմիր: Ախորժակի համար խմիր... խմիր... խմիր...

ՄԱՐՈՒՔՅԱՆ. Բան գտավ ասելու: Ախ գու անպիտան, սրիկա: Ախ, գու վողորմելի հարբեցող:

ՆՎԱՐԴԻ. Թող, Պետրոս: Ասում եմ թող: Դուրս յեկ սենյակից: Լսում ես, թե վոչ, քեզ եմ ասում (բոնելով նրա ուսից):

ՄԱՐՈՒՔՅԱՆ (նեռացնելով նվարդին). Ավելակաս մի խոսիր:

ՊՈՂՈՍՅԱՆ. Դու իմ վողերս խմելով վչացրիր: Անընդհատ խմիր, խմիր, խմիր: Խոկ այժմ—դուրս: Վոնց վոր շանը: Դեպի փողոց...

ՄԱՐՈՒՔՅԱՆ. Բան գտավ ասելու: Դե ինչ ե վերջապես, իմ տունս գիշերանոց ե, գինեառն ե, գործարանն ե, բանվորական հանրակացարանն ե, թե գողերի վորջ ե:

ՆՎԱՐԴԻ. Թող, Պետրոս: Ախ, թնդ:

ՄԱՐՈՒՔՅԱՆ. Ինչեր ե գուրս տալիս անպիտան սրիկան: Յես եմ նրան հարբեցրել վողորմելի հարբեցո-

զին: Խմիլը, բայց խելքդ մի կորցնիր: Ինձանից թող որի՞նակ առնելիր: Յես գրեթե ամեն որ խմաւմ եմ, բայց յերբէք չեմ հարցում:

ՆՎԱՐԴԻ. Հարբած ես դու, Պետրոս, հարբած ես, ինչ-պես ամենավերջին գալշելին, բայց սպասիր:

ՄԱՐՈՒՀՔՅԱՆ (ՂԱՅԵԼՈՎ). ՅԵՐԵԿՔ (ՊԼՐՏՈՎԱԾ Ե) ՀԱՅ ՀԱՐ-
ՐՈՎԱՅ: Բայց ինչո՞ւ: Ինչո՞ւ, հարց և տրվում: Միայն այն
պատճառով, վոր յես իմ չափս (ՊԼՐՏՈՎԱԾ Ե) հաստատ գի-
տեմ: Գիտեմ (ՊԼՐՏՈՎԱԾ Ե) յես իմ չափս: Ահա թե ինչ:
Նուրբ (ՊԼՐՏՈՎԱԾ Ե) գիտություն ե: Առողջությանս համար
եմ խմում, բանվորական ույժերս (ՊԼՐՏՈՎԱԾ Ե) պահպանելու
համար: Չափավոր եմ խմում: Առողջա (ՊԼՐՏՈՎԱԾ Ե) պահա-
կան տեսակետից ահա թե վոնց եմ խմում: Ճիշտ ե: Ապ-
րանքի վորակը լավացնելու (ՊԼՐՏՈՎԱԾ Ե) համար: Ճաշի ժա-
մանակ, ախորդակի (ՊԼՐՏՈՎԱԾ Ե) համար եմ խմում: Դեռ, յե-
րեկոյան ել ընկերներիս հետ նույնպես տրամադրության
համար (ՊԼՐՏՈՎԱԾ Ե): Ահա թե ինչպես եմ խմում: Չափավոր:
Վորովիճակ յես իմ չափս (ՊԼՐՏՈՎԱԾ Ե) գիտեմ: Չափս (ՊԼ-
ՐՏՈՎԱԾ Ե) հաստատ գիտեմ:

ՊՈՂՈՍՅԱՆ (կատաղի, բռունցքով խփելով սեղանին).
Գիտես:

ՄԱՐՈՒՔՅԱՆ (նովնպես խփելով սեղանին). Գիտեմ,
ստանան տանիք

ԵՎԱՐԴԻ. Ալ, դու մայր իմ: Ես լնչ և վերջապես:
ՊՈՂՈՍՅԱՆ (ավելի կատաղիղով, ավելի մոտենալ և
Մարովյանին). Գիտե՞ս:

ՄԱՐԴՈՒՔՅԱՆ (ին նախաճշելով, զիրտալով). Դիմում:
(Հանկարծ Պարսպանի, գաղանի նման մռնչալով, բարձրացր-
նում է շիքը Մարտիյանի գլխի վրա):

ՆՎԱՐԴԻ (Եջալով). Ահ, կապանի (արագությանք կախված է Պողոսյանի ձեռփյա)։

ՊՈՂՈՍՅԱՆ (ուժգին ու կրպիս կերպով հրաւ է Նը-
վարդին). ՀԵռացիք: (Հարվածից նվարդ մի կողմն է ցա-
կում. Պողոսյանից խած չի ըստ ձեռքից վայր է բնենում):

ՄԱՐՈՒՔՅԱՆ. ԱՌ, այդպէս ուրեմն (խոսմ ե սեղանիք վրայից խոհանոցային դանակը յեզ ուզում ե խփել Պողոս-լանին):

ՄԱՐՈՒԹՅԱՆ (ՀՍԵԼՈՎ). Ենթաք (զիրտում է) չեմ հար-
բում: Բայց ինչո՞ւ: Ինչո՞ւ, հարց ե տրվում: Միայն այն
պատճառով, վոր յես իմ չափս (զիրտում է) հաստատ գի-
տեմ: Գիտեմ (զիրտում է) յես իմ չափս: Ահա թե ինչ:
Նուրբ (ոլիրտում է) գիտություն ե: Առողջությանս համար
եմ խմում, բանվորական ուշիքերս (զիրտում է) պահպանելու
համար: Չափավոր եմ խմում: Առողջա (զիրտում է) պահա-
կան տեսակետից ահա թե վոնց եմ խմում: Ճիշտ ե: Ապ-
րանքի վորակը լավացնելու (զիրտում է) համար: Ճաշի ժա-
մանակ, ախորդժակի (զիրտում է) համար եմ խմում: Դեռ, յե-
րեկոյան ել ընկերներիս հետ նույնպես տրամադրության
համար (զիրտում է): Ահա թե ինչպես եմ խմում: Չափավոր:
Վորովհետեւ յես իմ չափս (զիրտում է) գիտեմ: Չափս (զի-
րտում է) հաստատ գիտեմ:

ՊՈՂՈՍՅԱՆ (կատաղի, բռունցքով խփելով սեղանին).
Գիտես:

ՄԱՐՈՒՔՅԱՆ (նովնպես խփելով սեղանին). Գիտեմ,
ստանան տանիք

ԵՎԱՐԴԻ. Ալ, դու մայր իմ: Ես լնչ և վերջապես:
ՊՈՂՈՍՅԱՆ (ավելի կատաղիղով, ավելի մոտենալ և
Մարովյանին). Գիտե՞ս:

ՄԱՐԴՈՒՔՅԱՆ (ին նախաճշելով, զիրտալով). Դիմում:
(Հանկարծ Պարսպանի, գաղանի նման մռնչալով, բարձրացր-
նում է շիքը Մարտիյանի գլխի վրա):

ՆՎԱՐԴԻ (Եջալով). Ահ, կապանի (արագությանք կախված է Պողոսյանի ձեռփյա)։

**ՆՎԱՐԴԻ (նշալով). Ախ, Կմորթի (արագուրյամբ մտե-
նում է Մարույանին յեվ Պողոսյանին։ Պողոսյանն ուժգին
բոնում է Մարույանի այն ձեռքը, վորով նա բոնած է դա-
նակը։ Դանակը ընկնում է ձեռքից։ Պողոսյանը Մարույանին
յերեսի վրա յե ձգում յեվ իր ամբողջ մարմնով ընկնում է
նրա վրա, սկսում է խեղդիլ։ Սեղանը դրդպարով վայր է ընկ-
նում։ Նվարդն իզուր աշխատում է յետ հաշել Պողոսյանին։
ՄԱՐՈՒՅԱՆ (խոխում է, նվարդին). Մարդկանց...
Մարդկանց...**

ՆՎԱՐԴ (բղազում է). **Ոգնեցեք...** **Ոգնեցեք.** (Ալեքսանդր Բարսեղյանը վազելով սենյակն է մտնում: Մի րոպէ բարացած է մնում, իսկ հետո վազում է ողնիլու, դժվարությամբ լետ է բառում խելազարված Պողոսանին):

ՊՈՂԱՍՅԱՆ (Խաբառում է). Բաց թող, բաց թող (Բար-սեղյանը եցում է Երան սունդուկի վրա յեզ պիճի բռնում է: Պողոսյանը խածնում է Բարսեղյանի ձեռքը:

ԲԱՐՄԵԴՅԱՆ. Դու խածնո՞ւմ ես (ձեռքը բարձրացնում ե, վոր խմիի, բայց հանկարծ անօարծ է մնում: Վերին ասի-հանի զարմազած): Պողոսյան:

ՄԱՐՈՒՔՅԱՆ (վեր կենալով հատակից, ծեծից բիշ ըգ-
գաստանալով). Նա... Նա... Ավազակ, սրիկան, ուղում Եր-
պահնել:

ՆՎԱՐԴԻ (Բարսեղյանին, ցույց տալով Մարդկանին), ԻՆ-
ՔԸՆ և մեղավոր: Մարդկան պարզութել և, իսկ նա ծագրի



առարկա յեր դարձրել (սրբնեղուրյամբ՝ բնկած սեղանն իր տեղի է դնում, հավաքում և ջարդված պնակները):

ԲԱՐՄԵԴՅԱՆ (բռնած և Պողոսյանին, վար հանկարծ շօմից յեկ անտարբեր լոեց). Խածեց սատանան (Պողոսյանին) ինչպես յեղավ, վոր դու այստեղ ընկար: Վորտեղից (Պողոսյանը լուռ է): Վարոտում եր և հանկարծ լոեց. դուզում ե: (Պողոսյանը տեխում է յեկ ամբաղջ մարմնով դողում). Ի՞նչ ե պատահել նրան:

Նվարդ. Ասում եմ, վոր մարդն իրեն շատ վատ և ըգ-գում: Ցնորդել ե:

ՄԱՐՈՒԻՔՅԱՆ (ծամածուելով, չարացած). Իրան վատ և զգում: Ցնորդել ե: Իսկ մարդ սպանել կարժել ե: Այդպիսի գործի համար խելքը բավականանում ե: Ցես այդ ավազակին միլիցատուն կտանեմ:

ԲԱՐՄԵԴՅԱՆ. Դու, ընկեր Մարուքյան, մի տաքանար: Սպասիր: Նա հիվանդ է: Տեսնում ես, դոզում ե: Ցես նրան հենց այժմս ել ամբուլատորիա... Դեհ, դու Նվարդ, հետեւիր նրան: Դու մի վախիր, տեսնում ես դժվարությամբ և շունչ քաշում: Ցես անմիջապես հերթապահ բժշկի մատ կցնամ: (Նվարդը վախենալով մոտենում է սունդուկի վրա անզգա դրուրյան մեջ փոված Պողոսյանին: Մարուէյանի յեկ Բարսեղյանի հետագա խոսակցուրյան ընթացքում հոգում է նրա մասին, դեւիլը Պողոսյանի հակատին բաց լար: Յերեսը դարձնելով, կամացուկ արբում է արտասում: Բարսեղյանն արագուրյամբ դեսի դուռն է գնում: Մարուէյանը կանգնեցրենում է նրան):

ՄԱՐՈՒԻՔՅԱՆ. Այդ ինչու յե պետք, ընկեր Բարսեղյան: Դու յել զլիխ դոխտուր դառնար: Այս գործը յես այսպես չեմ թողնի: Ցես ինքս անմիջապես միլիցատուն կդը-նամ: Այնտեղ ամեն ինչ կպարզվի (ուզում է գնալ):

ԲԱՐՄԵԴՅԱՆ (կանգնեցնելով Մարուէյանին). Ընկեր, Մարուքյան, դու հարբած ես, ինչ ե: Տեսնում ես, վոր մար-դը հիվանդ ե: Ցես վոնց և դոզում: Կարելի յե ջերմախտով ե հիվանդ, իսկ դու միլիցատուն ես գնում:

ՄԱՐՈՒԻՔՅԱՆ. Զերմախտ ե, թե սևախտ, միլիցատա-նը կպարզվի: Ել վոչ մի խոսք:

ԲԱՐՄԵԴՅԱՆ (նորից չի բողնում Մարուէյանին). Հար-բած ես դու, ընկեր Մարուքյան:

ՄԱՐՈՒԻՔՅԱՆ (բարկացիոս). Այդ յես եմ հարբած:

Նվարդ (գրգոված). Բա սպ: Ինքդ կոփվը սկսեցիր, իսկ այժմ միլիցատուն:

ՄԱՐՈՒԻՔՅԱՆ (Բարսեղյանին, գրգոված). Այդ յես եմ հարբած:

ԲԱՐՄԵԴՅԱՆ. Կարծես գինու տակառ լինես, ընկեր Մարուքյան, մի կիլոմետր հեռավորությունից հոտը փշում է: Դուք բոլորդ ել հարբեցողներ եք:

ՄԱՐՈՒԻՔՅԱՆ. Ինձ, ընկեր Բարսեղյան, այդպիսի բան-ասելու իրավունք չունես: Դու նրան, այդ սրբկային ասաւ: (ցույց է տալիս Պողոսյանին): Ցես իմ չափս գիտեմ:

Նվարդ. Ցերանի խեղդվեյիր:

ՄԱՐՈՒԻՔՅԱՆ. Ցես կանոնավոր եմ խմում: Չափավոր եմ խմում, ել վոչ մի խոսք:

ԲԱՐՄԵԴՅԱՆ. Ցերեկի տարին մի անգամ յես խմում:

ՄԱՐՈՒԻՔՅԱՆ. Ինչու տարին մի անգամ: Ամեն որ ել խմում եմ: Առողջապահական տեսակետից եմ խմում:

ԲԱՐՄԵԴՅԱՆ. Առողջապահական տեսակետից ամեն-որ, չենց իսկական հարբեցող ես, վոր կաս: Խրոնիկական հարբեցող:

Նվարդ. Հարբեցող և ուրիշ վոչինչ: Վորտեղ եյին ա-ռաջ իմ աչքերս:

ՄԱՐՈՒԻՔՅԱՆ. Դու, ընկեր Բարսեղյան, ինձ անպատճելու իրավունք չունես: Ի՞նչ, գործարկոմ վոր մտար, քիթդ բարձրացրի՞ր: Դու, ընկեր Բարսեղյան, պատասխանատու յես անպատճելուդ համար, առանց մի խոսքի:

ԲԱՐՄԵՂՅԱՆ. Այո, պատասխանատու յեմ, ընկեր Մարտոքյան, ուրախությամբ պատասխան կտամ: Դու յեկ ակումբ, մտիր առողջապահական բջիջ և դասախոսության ներկա յեղիբ: Այնտեղ քեզ, ընկեր Մարտոքյան, լրիվ պատասխան կտան:

ՆՎԱՐԴԻ. Լավ ակումբ գնացող գտար: Նա իր ընկերների հետ միայն գարեջրատներ քարշ գալ գիտե:

ՄԱՐՈՒԻՔՅԱՆ (բարկացկոս). Սատանան տանի, տրամադրությունս բարձրացնելու համար միթե իրավունք չունեմ ընկերներիս հետ խմելու: Կյանքը գժվար ե, թե վոչ: Ամեն մարդ ել ուզում է մոռացության տալ իրեն: Ահա թե ինչպես ե բանք:

ԲԱՐՄԵՂՅԱՆ (հուզված): Մոռացության տալ ինքն իրեն: Մեր որերին մոռացության տալ: Այսպիսի ժամանակ:

ՄԱՐՈՒԻՔՅԱՆ. Հիմի ինչպիսի ժամանակ ե վոր:

ԲԱՐՄԵՂՅԱՆ. Ինչպիսի ժամանակ ե: Թագավորի ժամանակն ենք ապրում, ինչ ե: Թագավորի ժամանակ բանվորներից յոթը կաշի եյին քերթում: Այն ժամանակ ուրիշ եր, յերր բանվորները մոռացության եյին տալիս իրենց: Ուղիղ ե: Ստրուկներ եյինք: Դառն բախտն ողիով եյինք հագեցնում: Իսկ այժմ, ընկեր Մարտոքյան, մենք ենք տերը: Ինչպիսի կյանք ենք կառուցում: Մեր գործի մասին հրաշքներ են պատմելու: Իսկ դու ասում ես մոռացության տալ: Վասովը չոր պահիր, իսկ դու նրան, ընկեր Մարտոքյան, ողիով յես թրջում: Ե՞ս, դու, ամոթ քեզ:

ՄԱՐՈՒԻՔՅԱՆ (նենզորեն). Հապա մի ասա տեսնեմ, ընկեր Բարսեղյան, ինքն յերբ ես թողել խմելը:

ԲԱՐՄԵՂՅԱՆ (օփորվելով). Ի՞նչ կա վոր, կարճ ժամանակ ե վոր թողել եմ: Մի ամիս ե: Հենց վոր ընտրեցին գործարկոմ, հենց վոր սկսեցի առողջապահական բջիջի մեջ աշխատել, իսկույն և յեթ թողի: Անվերջ աշխատանքից յես առանց գինու յել հարբածի նման եմ: (Հանկարծ ուժին սուլում ե գրծարանի սշակը՝ սկսում ե լուսանալ: Պողոսյանը, սունդուկի վրա փոփած, անհանգստության նշաններ ե ցույց տալիս: Հանկարծ վեր ե բռչում: Նվարդը վախեցած նրանից, մի կողմ ե նետվում):

ՊՈՂՈՍՅԱՆ (ծայրասինան գրգռված). Շչակը, շչակը (Պողոսյանը նորից ընկնում ե սունդուկի վրա յեվ հանկարծ սկսում դառնագին յեվ բարձրաձայն լալ: Բոլորը վախեցած ու զարմանելով նայում են նրան: Շչակը ըշում ե):

ՆՎԱՐԴԻ. Ընկեր Բարսեղյան, կզնանս վերջապես բըշչի հետեւից, թե վոչ:

ՄԱՐՈՒԻՔՅԱՆ. Ընկեր Բարսեղյան, կհոացնենս այս-տեղից այս գարշելիին, թե վոչ:

ՆՎԱՐԴԻ (նիստերկորեն նշալով). Զհամարձակվես...

ՄԱՐՈՒԻՔՅԱՆ (օփորվելով). Զհանդ կտրիր:

ԲԱՐՄԵՂՅԱՆ (մոտենում ե Պողոսյանին, վորը դառնագին լալիս ե). Ի՞նչումն ե գործը, ինչու յես վայնասուն բարձրացրել:

ՊՈՂՈՍՅԱՆ. Շչակը, լսնեմ ես, շչակը (լալիս ե):

ԲԱՐՄԵՂՅԱՆ. Դե լավ, շչակը, ինչ կարիք կա վայնասուն բարձրացնելու:

ՊՈՂՈՍՅԱՆ (լալով). Շչակը, լսնեմ ես, շչակը: Ներսը ալեկրծվում ե, վասվում ե... Գործարանային մարդ եմ... Միս ու արյուն ե գարձել ինձ համար գործարանը... Ցերանի գործի գնային.. Աշխատել եմ ուզում... (լալիս ե):

ՄԱՐՈՒԻՔՅԱՆ (ինքն իրան). Տեսնանեմ ես քոսող սրիկան ինչ ե ուզում:

ՆՎԱՐԴԻ (ինքն իրեն) ԱՌԻ, ինչ գժրախմտություն եւ:
ԲԱՐՄԵՂՅԱՆ. Ե՞ս, ինչ կա վոր, զնանք: Կարծղ ես
Դնալ:

ՊՈՂՈՍՅԱՆ (շնելով շարունակում եւ բարձրաձայն վոր-
քայ). Մարդ եյի, դործ եյի անում, բանվոր եյի, իսկ այժմ
ինչ եմ, ինչ... Փալաս, գարշելի արարած,.. Ամեն մի մարդ
ուխիս եւ թքում (լալիս ե):

ԲԱՐՄԵՂՅԱՆ. Դե, ինչու յես լալիս, կարծես թե կիս
մինս, ճանաշում ես ինձ:

ՊՈՂՈՍՅԱՆ. Բարսեղյան...

ԲԱՐՄԵՂՅԱՆ. Այ, այդպես: Յես քեզ ընկեր Պողոս-
յան, սորից գործարանում կտեղավորեմ:

ՄՎԱՐԴԻՔՅԱՆ (մի կողմ). Բան ասաց: Կարծես թե
իմած չե, իսկ չի իմանում ինչ եւ իսոսում:

ՊՈՂՈՍՅԱՆ (անսպասելի կերպով զարմացած). Գործ-
արան: Ի՞նձ:

ԲԱՐՄԵՂՅԱՆ. Այս, քեզ կտեղավորեմ: Յես քեզ ըն-
կեր Պողոսյան, այս բոպեյիս մեր ամբուլատորիան կտա-
նեմ: Այստեղից քեզ, ընկեր Պողոսյան, նարկոսիկների դիս-
պանսերը կուղարկենք: Դա այնպիսի մի հիվանդանոց
ե, վորոնկ բժշկում են հարբեցողներին: Այստեղ մի քանի
ամիս կհաճախես, կրծշկվես, ընկեր Պողոսյան: Նոր կյանքը
կճանաչես, ահա թե ինչպես:

ՆՎԱՐԴԻ (անսահման ուրախությամբ). Ախ, ինչ լավ
մտածեցիր, ընկեր Բարսեղյան, մեծապէս շնորհակալ եմ:

ՄՎԱՐԴԻՔՅԱՆ (մի կողմ). Դա նշանակում եւ մեռածին
քրոնացնել:

ՊՈՂՈՍՅԱՆ (վերին աստիճանի գրգռված) Ի՞նձ: Գոր-
ծարան:

ԲԱՐՄԵՂՅԱՆ. Ասում եմ կտեղավորեմ. ինքս կյերաշ-
խավորեմ քեզ համար, ինչպես գործարկում անդամ:

ՄՎԱՐԴԻՔՅԱՆ (մի կողմ). Մարդ գտավ յերաշխավո-
յելու:

ԲԱՐՄԵՂՅԱՆ. Ով վոր հինը կվերհիշի, նրա աչքը թող
դուրս գա: Կրծշկվես, մարդ կդառնաս, կներեն քեզ և կաթ-
առն: (Պողոսյանը հանկարծ ցնցփում ե:)

ՊՈՂՈՍՅԱՆ. (արորինակ բացականչելով) Կաթսան:

ԲԱՐՄԵՂՅԱՆ. Կներեն, ասում եմ և կաթսան:

ՊՈՂՈՍՅԱՆ (հանկարծ վերին աստիճանի գրգռված բա-
ցականում ե). Կաթսան... Կաթսան... Ընկերներ... Փոր-
ձանք... Խաշում ե կաթսան... Խաշեց... Հնոցից գոլորշին
թողեք, փակիչները... Կպայթեցնի... Կմահացնի... Կորանք...
Կպայթեցնի... (ահ ու սարսափի մեջ նետփում ե դեպի դու-
ռը: Հանկարծ դոնից հետ զնալով, վայրենաբար բղավում) Ա... ա... ա... (որհասական կերպով պատապանվելով յերեվա-
կայական հակառակորդից) Անձնատուր չեմ լինի, չեմ լինի
(շարունակում ե կատաղի կերպով պատապանվել, հանկարծ
նետփում ե դեպի օջապատղները). Յեղայրներ, յեղայր-
ներ, աղատեցեք, նրանք են... Երանք են... Նալբանդյանը,
Պետրոսյանը: Հնոցը... Հնոցը... Աղատեցեք (նետփում ե դե-
պի Մարուբյանը, վերջինս սարսափած յետ ե բռչում, խոսմ ե
փոքրիկ հստաբնը):

ՄՎԱՐԴԻՔՅԱՆ (վայրենաբար) Հեռացիք, կապանեմ:

ԲԱՐՄԵՂՅԱՆ (սարսափած). Զերմախտ ե:

ՆՎԱՐԴԻ. Սիմոն... Սիմոն...

ՊՈՂՈՍՅԱՆ (որհասական կերպով պատապանվելով).
Անձնատուր չեմ լինի, անձնատուր չեմ լինի (վեսացած ու
վայրենաբար բղավում ե). Վառվնեմ ե, վառվնեմ ե. Ա..ա..ա.
(հանկարծ ընկենում ե հատակի վրա ու հանդարտվում):

ԲԱՐՄԵՂՅԱՆ. Մեռնում ե:

ՄՎԱՐԴԻՔՅԱՆ. Շունը շան պես ել պիտի սատկի:

ՆՎԱՐԴԻ (հանկարծ ցատկում ու մոտենում Մարուբյանին սեղմած բռունցքով) Դու... (բարկանալուց յեկ վետից չի կարողանում խոսք արտասանել):

ԲԱՐԾԵՂՅԱՆ (բարկացած). Դու, ընկեր Մարուբյան, մի քիչ զգույշ... Մեռնում ե մարդը... (Մարուբյանը կոպտարար կրնակը գործնում է դեպի Բարսեղյանը յեկ նվարդը):

ՆՎԱՐԴԻ (փափած Պողոսյանի մոտ). Մեռագ...

ԲԱՐԾԵՂՅԱՆ (չոր). Ուրեմն, կանչեմ մարդկանց, հայ-^ւ տարարություն պետք ե բաց թողնել (ըստ զնում է): (Նվարդը վետից ընկնած, խոնարհել է գլուխը Պողոսյանի դիմի վրա: Լոռիքյուն):

ՄԱՐՈՒԲՅԱՆ (առաջիկ նման կրնակը դեպի նվարդը բեյել հանցավոր, բայց կօպիս). Ի՞նչ ես այդտեղ կախարդում: (Նվարդն արագ նեռանում է դիմի մոտից: Զպատասխանելով, յերկար, ծանր յեկ տարուինակ հայացքով նայում է Մարուբյանին: Հետո մոտենում է կախարանին, ըստ հագնում ե վերարկում ու զլխառոր յեկ զնում դեպի դուռը: Մարուբյանը դառնում է դեպի նվարդը):

ՄԱՐՈՒԲՅԱՆ (կասկածանելով, հանկարծակի անհանգստորյամբ). Ո՞ւր ես զնում:

ՆՎԱՐԴԻ (խուսափելով ամուսնու հայացից) Զարուհու մոտ եմ զնում... Մեռածի մոտ պիտի նստեմ, ինչ ե...

ՄԱՐՈՒԲՅԱՆ. Իսկ ինչո՞ւ համար հագնվեցիր: Կարծեմ սենյակներս կողք-կոփքի յեն:

ՆՎԱՐԴԻ (սփորված, նայում է հատակին). Ինչ վոր սարսուռ եմ զգում: (Նվարդը կարծես վերջին հրամետեի գաղտագողի հայամի և ձգել դիմի վրա: ամուսնու վրա չնայելով, արագորեն դուրս է յենում: Թախծագին փակվում է դուռը: Մարուբյանը մոտենում է դռան, բացում, նայում է դեպի միջանցքի դաշտարկությունը, սփորված յեկ մասհոգված նորից

դիմում դրակի մոտ):

ՄԱՐԾԻՔՅԱՆ. Սատկելու աեղ գտագ:

ԳԱՐԵԿԱՐ շնչն: (Մարուբյանը բացում է պատուհանը: Լավում է գարբնաղ գործարանի արմուկը: Լուսաբաց: Մարուբյան ուժասպառ նոսում է արոտի վրա: Անհանգիս մասմանելի մեջ է: Դուռը բաղխում են):

ՄԱՐԾԻՔՅԱՆ (սրափելով). Մարիր: Ո՞վ ե: (Զարուհու գլուխը յերեխում է դոնից: Հետո զգույշ յեկ վախենարով ներս է մտնում: Վախենարով դիմում է սենյակը):

ԶԱՐՈՒՀԻ. Ինչ փորձանք ե (վախենարով դիմում է դիմի: Մարուբյանը անուշադիր լինելով դեպի նա, նարից մտերի մեջ է խորասագվում): Գործարանում եր աշխատառում, գործարանն ել յեկագ մեռնելու (մոտենում է դիմին: Հանկարծ վախենարով դիմի վրա չի էլ աշխերը չուլ ե, տամաները բացել... Վառվից մարդ):

ՄԱՐԾԻՔՅԱՆ (ընդիմակելով հանկարծ Զարուհուն). Նրա գործը քեզ մնու ե:

ԶԱՐՈՒՀԻ (սփորվելով, խուսափելով Մարուբյանի հայացից, վախենարով). Ինձ մոտ եր, ինձ մոտ եր նվարդը...

ՄԱՐԾԻՔՅԱՆ (բախծագին, անորոշութեամբ) Ի՞նչ:

ԶԱՐՈՒՀԻ (լուս ե, բայց ուզում է մի բան ասել, ուզա վեռական դիրք բռնելով). Գնաց նվարդը:

ՄԱՐԾԻՔՅԱՆ (մեծ անհանգստությամբ). Ո՞ւր:

ԶԱՐՈՒՀԻ (լուս ե, վեցը հաստատ, նայելով ուղղակի Մարուբյանին, ննչվելով դիմի ներկայությունից, աշխատում է խոսել բոլորովին կախացուկ): Բոլորովին գնաց... Զգիտեմ ինչ և պատահել նրան... իմ գործս չե... Բայց նվարդն ահա թե ինչ պատվիրեց քեզ հայտնելու: Ասա, ասում ե իմ մարդուն, վոր չեմ սիրում նրան, աչքերս չտեսնելին նրան,

թող ապահարզան տա, կամ ինչպես վոր ուղում է: Նա գընաց գյուղ, ինձանից ել ճանապարհածախս վերցրեց... (Մարտիքյանը ծանր շունչ և առնում, վայրենաբար նայում և Զարուհու վրա): Եդ ինչ և կատարվում քեզ հետ... Ինչպես յերեսդ փոխվեց... Ավելի լավ և յես հնանամ... (Զարուհին վախենալով արագուեն նեռանում է: Լուրջուն: Հանկարծ Մարտիքյանն արագ շարժումով պատռում է շոպիկի ոձիք: Թոշում է տեղի, վայր և գյուղում նատարանք):

ՄԱՐԱՒԻՔՅԱՆ (հանկարծ, վոչ սովորական ձայնով). Նըգարդ, Նվարդ (արագուրիամբ դուռը լայն բանալով, նետվում և սենյակից: Միջանցքից լսվում է երա մարող կոչք՝ Նվարդ...)

Դուռը բալրովին բաց է: Սենյակում տիրում է խորը լուրջուն: Բացի մեռածից, վոչ վոյ չկա: Լավում և աշխատալ գործարանի դրդունքը: Շարունակվում է բանվարական որը: Գործարանի շչակները նորից ուժեղ յեզ յերկարագել շնում են):

ՎԱՐԱԳՈՒՅՑ:



ՀՀ Ազգային գրադարան



NL0311547

11.842

ԳԻԱՆ Ե 20 ԿՈՐ.

“47777”

Цена 20 коп.
х. 5.0



АННАТОЛИЙ КРЕЙН

ЗАВОДСКИЕ ГУДКИ

Антиалкогольная драма в 1 акте

На армянском языке

Сев.-Кав. Кр. отд. ЦЕНТР. ИЗДАТ. народов СССР
“КРАЙНАЦИЗДАТ”